ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտեգրված պարապունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքս-տում

Դաստիարակ՝ Սուսաննա Արշակյան

«Արարատ հայնքի, Արարատ քաղաքի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 2 մսուր մանկապարտեզ » ՀՈԱԿ

Արարատ 2023

Բովանդակություն

Ներածություն…….3

Գլուխ 1……..4

Եզրակացություն……. 9

Օգտագործված գրականություն……10

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, համակողմանի ներդաշնակ զարգացումը: Այն նպատակին ուղիներից է՝ մանկապարտեզում ուսումնա-ռությունը ինտեգրված պարապմունքների միջոցով կազմակերպելը: Թե-մատիկ պարապմունքների ընթացքում կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, անձնական կարգապահություն, շրջապատում կա-տարվող փոփոխությունների, ճիշտ ընկալու:

Կրթությունը պետք է լինի ճշմարիտ,
Լիակատար, պարզ ու հաստատուն:
Յ. Ա. Կոմենսկի

Մեր դաստիարակության աշխատանքը պետք է զուգակցվի կոլեկտիվիստի աճեց-ման կարողության հետ և միաժամանակ՝ կոլեկտիվիստական այդ իրադարձության մեջ երեխայի անձի բազմակողմանի զարգացման համար հնարավորություն ընձեռ-նելու համար:

Ն. Կ. Կրուպսկայա

Ուսուցումը բնորոշ է մեծի ակտիվ, ուսուցող դերով: Դա հնարավորություն է տալիս նպատակաուղղված իրականացնել խնդիրները, ընթանալ արդյունավետ ուղիով:

Ս. Պ. Ուսովա

Նախադպրոցական տարիքի երեխաների մեջ անհրաժեշտ է սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են՝ քննադատական մտածողութ-յունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, երևակայությունը, զարմանալու, աշխատանքից գեղագիտական հաճույք ստալու սովորությունը: Բոլոր երեխաներն այս կամ այն չափով օժտված են այս հատկանիշներով, բայց հաճախ կյանքի առա-ջին տասնամյակում կորցնում են դրանք: Մինչդեռ այն հատկությունները կարևոր դեր են խաղում հատկապես սովորելու գործընթացում:

Թեմատիկ ուսուցումը ապահովում է երեխայի մտավոր, սոցիալական, հուզակա, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի և ներդաշանակ զարգա-ցումը: Բազմակողմանի զարգացման ուսուցման մեջ հաջողակ երեխաները մեծանում են հոգատար, աջակցող միջավայրում: Այսպիսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները, և ինքնուրույնություն ներշնչում նոր ձեռք բերվող գիտելիքները կիրառելու համար: Դա է պատճառը որ մեր մանկապարտեզում շատ է կարևորվում ինտեգրված պարապունքների անցկացումը:

Գլուխ 1. Աշուն

Նպատակը

Կրթական. 1.1 Ամրացնել երեխաների գիտելիքները բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների, կենդանիների, բույսերի, բնության մեջ մարդու աշխատանքի վերաբերյալ: Ձևավորել ընդհանուր պատկերացում աշնան մասին, ընդլայնել պատկերացումները աշնան բնութագրիչ հատկանիշների վերաբերյալ, ձևավորել մտքերն ինքնուրույն արտահայտելու, հարկ եղած դեպքում ձեռք բերված գիտելիքները օգտագործելու կարողությունը:

Զարգացնող.1.2 Զարգացնել վերլուծական մտածողությունը, ուշադրությունը և հիշողությունը: Ճշգրտել երեխաների տպավորությունը սիրելի քաղաքի, աշնանային տոնակատարությունների վերաբերյալ:

Դաստիարակչական. 1.3 Դաստիարակել սերը հայրենիքի հանդեպ, երեխաբերին հաղորդակից դարձնել հրայրենի բնությանը, ազգային մշակույթին, սովորեցնել պահպանել բնությունը:

Բառապաշարի հարստացում.1.4 Գործնականորեն իրականացնել տերևաթափ, ոսկե, գույզգույն, նախշուն, ամպամած, վարդագույն, դեղնահեր, բարեբար, բազմագույն, գունագեղ, անձրևոտ, բերքառատ, դարչնագույն, մանուշակագույն, ոսկեհեր բառերի ուսուցում: Անհրաժեշտ պարագաներ՝ գունավոր տերևներ, մթերք և բանջարեղեն, պըտուղներ, նկարներ Մ. Սարյան «Աշնան մրգեր », «Արարատյան դաշտավայրը» և ռուս նկարիչ Լևիտանի « Աշուն » բնանկարը :



Մ. Սարյան

Լևիտանի «Աշուն»

Պարապունքի ընթացքը՝
Զրույցը սկսել աշնան մասին հանելուկներով:
Այդ ընթացքում, որպես շարժառիթ, հնչում է հատված Է. Վեբերի ստեղծագործությունից:

Հանելուկ՝ Ղ. Աղայան, «Այդ ե՞րբ է լինում»

Օրն է կարճանում,
Ծառն է մերկանում,
Անձրև է մաղում,
-Այդ ե՞րբ է լինում: (Աշնանը)

Երեխաների պատասխանները լսելուց հետո առաջարկեցի նկարագրել օրվա եղանակը տվյալ պահին և կատարել համապատասխան նշումներ բնության օրացույցում:

- Այժմ տարվա ո՞ր եղանակն է:
- Աշուն է: (Երեխաներ)
- Երեխաներ այժմ մենք պատմենք, թե ի՞նչ գիտենք աշնան մասին:
- Ինչպիսի՞ն է աշունը: Օրացույցի ո՞ր օրվանից է սկսվում աշունը: (Աշունը սկսվում է սեպտեմբերի մեկով):
- Որո՞նք են աշնան ամիսները: (Աշնան ամիսներն են՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր):

- Ի՞նչ տոներ ենք նշում աշնանը: (Գիտելիքի օրը, անկախության օրը, ուսուցչի օրը, մեր քաղաքի տոնը, բերքի տոնը):
- Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում կենդանական ու բուսական աշխարհում, ո՞ր կենդանին է աշնանը ձագուկներ ունենում:(Աշնանը ձագուկներ է ունենում նապաստակը, թիթեռները դառնում են հարսնյակ, բզեզները ձու են ածում և սատկում: Միջատները մտնում են ճեղքերը, կույչ են գալիս ծառերի կևեղների տակ և այդպես էլ ձմեռում :Սկյուռը պաշար է հավաքում ձմռան համար: Գորտերը ծածկվում են տիղմի մեջ կամ թաքնվում ջրամբարի հատակում):
- Ի՞նչ է փոխվում թռչունների կյանքում և վարքագծում, ո՞ր թռչյուններն են չվում և ինչու՞:Որո՞նք են մնում մեզ մոտ ձմեռելու:

Երեխաներ- Կան թռչուններ, որոնք չվում են տաք երկներ՝ ծիշեռնակը, արագիլը, կռունկները, սագերը, սարյակները, իսկ մե մոտ մնում են ձմեռելու կաչաղակները, ճընճղուկները, ագռավները և այլը:
-Էլ ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում աշնանը բնության մեջ:
Երեխաներ-Աշնանը սկզբում տաք, արևոտ եղանակ է լինում, իսկ վերջում սկսում են օրերը ցրտել: Երկնքում հաճախ կուտակվում են սև ամպերը լինում է ամպրոպներ, անձրև է գալիս, փչում է սառը քամի՝ քամին պոկում է ծառաերի տերևները ու քշում հեռու-հեռու:

Երեխաներ, քանի որ դուք նկարագրեցիք աշունը, այժմ ժամանակն է գնալ աշնանային զբոսանքի, տեսնելու, թե ինչպիսին է մանկապարտեզի բակն աշնանը:

Երեխաները խմբով իրականացնում են երևակայական զբոսանք դահլիճում: Նրանք համեմատում են ծառերի տերևները, դրանք նմանեցնում տարբեր երկրաչափական պատկերների, բացատրում են, թե ինչու՞ են տերևները խշխշում:

Երեխաներ- Աշնանը մեր շրջապատում շատ գույներ կան, բայց ամենից շատ դեղեինն ու նարնջագույն են:

Աշխուժացնող խաղ՝ «Տերևներն ու քամին»

Հնչում է հատված Վիվալդիի «Տարվա եղանակները» ստեղծագործությունից:
Տերևները հանդարտ իրենց տեղերում: Քամու ժամանակ սկսում են պտտվել:
Աշունը նաև ամենաբերքառատ եղանակն է: Մրգեր, բանջարեղենը, աշնանային տերևներն ու ծաղիկներն իրենց տարբեր գույներով գեղեցկացնում են մեր շրջապատը: Աշունն ամենաեռանդուն աշխատանքների ժամանակն է:մարդիկ շտապում են հավաքել բերքը պահածոներ են պատրաստում: Դաշտում ցորեն ցանելու համար մարդիկ վարում են հողը, ծածկում են խաղողի վազերը: Բերքահավաքի ժամանակ բոլորն ուրախ են և օգնում են միմյանց:

Ասացվածքներ՝ աշնան մասին

Ամռանը աշնան մեկ օրը տարի է կերակրում:
Ով աշխատի նա կուտի:
Ձեռք ձեռքի, որ տանք սարեր շուռ կտանք:

Աշունը այնքան գեղեցիկ է, որ մեր բանաստեղծները, երգահաններն ու նկարիչները գովերգել են այն իրենց ստեղծագործություններում:
Երեխաները արտասանում են Հ. Թումանյանի «Աշուն» ոտանավորը:

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն.
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:

Պաղ-պաղ մեգի հետ
Փչում է քամինն,
Քշում է, տանում
Տերևը դեղին:

Տխուր հանդերից
Մարդ ու անասուն
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն:

Ի՞նչ բառերով կարող ենք նկարագրել աշունը:
Երեխաներ- Ոսկեզօծ աշուն, գեղեցիկ աշուն, գունագեղ աշուն, դեղնակարմրավուն աշուն, բերքառատ աշուն և այլն:

Ի՞նչ նվիրեց մեզ աշունը:
Երեխաներ- Աշունը մեզ նվիրեց ուրախություն, գույներ, բերք, արև, տերևաթափ…..

Դիտակտիկ խաղ՝ «Գտիր ինձ»

Նպատակը՝ Երեխաների մեջ ամրակայել բանջարեղենի , մրգերի , դրանց գույների և ձևի մասին պատկերացումները:

Խաղի համար պահանջվող նյութեր՝ քարտի վրա պատկերված մրգերի և բանջարեղենի համապատասխան գույներով սկավառակը պտտող սարք, խաղանիշներ (երեխաների մոտ):

Խաղի կանոնները

Երեխաներին հարցնում եմ, թե ինչե՞ր են պատկերված խաղաքարտերի վրա և ինչպիսի՞ գույներ ունեն դրանք: Խաղին մասնակցում են հինգ հոգի: Յուրաքանչյուր ենթախմբում մեկ երեխա պտտեցնու է արքը: Սլաքը կանգնելուց հետո երեխաներն արագ տեղադրում են խաղանիշները՝ համապատասխան գույնի պատկերի վրա:

Այնուհետև երեխաների աշխատում են արվեստի կենտրոնում՝ բաժանվելով երկու խմբի:

Նկարչություն՝ ծեփի տարբերակով՝ «Աշնան բարիքներ » (աղի խմորից նախապես ծեփած բանջարեղենի և մրգերի նկարազարդում)

Ապլիկացիա՝ համագործակցությամբ ստանալ աշնանային ծառ՝ գույնզգույն տերևներով:

Պարապմունքը ամփոփեցի հետևյալ հարցերով՝

1. Ինչի՞ մասին էին զրուցում:
2. Աշունն ի՞նչ բառերով գովերգեցինք:
3. Ի՞նչ նվիրեց մեզ աշունը:

Պարապմունք անցկացրել եմ ավագ խբում:

Եզրակացություն

Այսպիսով երեխաների կրթելու հիմնական նպատակն է զարգացնել ինտելեկտուալ, սոցիալական էմոցիոնալ , ֆիզիկական, էստետիկական, բազմակողմանի և համահունչ դաստիարակություն: Նպատակին հասնելու համար մեծ դերում է գտնվում մանկապարտեզում ներգրաված պարապմունքներից մեկը: Թեմատիկ պարապմունքի ժամանակ երեխաները մտածում են ինքնուրույն, և համագործակցում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յ. Ա. Կոմենսկի
2. Ն. Կ. Կրուպսկայա
3. Ս. Պ. Ուսովա